



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ՂԱՍԱԿԱՆԴՐԱՆ ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

2007թ. հոկտեմբերի 26-27-ին ԵՊՀ-ում տեղի ունեցավ «Հոգեբանության դասավանդման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով միջազգային գիտագործնական գիտաժողով, որը կազմակերպել էին փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի *հոգեբանության տեսության և պատմության ու կիրառական հոգեբանության* ամբիոնները:

Գիտաժողովին մասնակցում էին ինչպես հանրապետության բոլոր պետական, այնպես էլ ոչ պետական ու արտասահմանյան բուհերի և այլ կրթական հաստատությունների ներկայացուցիչներ:

Հատկանշական է, որ գիտաժողովին զեկուցումներով հանդես եկան նաև ԵՊՀ հոգեբանության բաժնի մագիստրատուրայի, ինչպես նաև այլ բուհերի ուսանողներ:

Գիտաժողովին ներկայացված էր 50 զեկուցման թեզիս Հայաստանից, Ռուսաստանից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Իրանից, Սիրիայից, Չինաստանից:

Գիտաժողովի բացմանը կազմակերպիչներին և մասնակիցներին ողջույնի խոսք ասաց ԵՊՀ ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Ա. Միմոնյանը: Նա մասնավորապես կարևորեց գիտաժողովի օրակարգը՝ կապված մեր երկրում կրթական համակարգի զարգացման միտումների ու Բոլոնիայի կրթական ծրագրերի ներմուծման գործընթացի հետ: Իր ողջույնի խոսքում ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆա-

կուլտետի ղեկան, պրոֆ. Հր. Միրզոյանը նշեց, որ այս գիտաժողովը փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական կյանքում վերջին 10-15 տարվա ընթացքում աննախադեպ միջոցառում է: Պաշտոնական բացման խոսքով հանդես եկավ կազմկոմիտեի նախագահ, հոգ. գիտ. լուկ., պրոֆ. Հ. Ավանեսյանը:

Այնուհետև տեղի ունեցավ ԵՊՀ-ի և IGEFA հիմնադրամի համատեղ ջանքերով կազմակերպված հոգեբանական ծառայության կենտրոնի հանդիսավոր բացումը:

Առաջին օրվա երկու լիագումար նիստերին զեկուցումներով հանդես եկան Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան մի շարք անվանի հոգեբաններ: ԵՊՀ կիրառական հոգեբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Գ. Շահվերդյանի ելույթը նվիրված էր հոգեբանական կրթության մեջ տեսության և պրակտիկայի հարաբերակցության հիմնախնդիրին: ՌՀՀ հոգեբանության ֆակուլտետի ղեկան, դոցենտ Ա. Բերբերյանը զեկույցում ներկայացրեց ուսման ընթացքում ուսանողի արժեքային-մասնագիտական զարգացման անձնային գործոնների ուսումնասիրման արդյունքները: Ամերիկահայ հոգեբան, հ.գ.թ. Մ. Գարազաշյանը հանդես եկավ «Հոգեբանության դասավանդում, մասնավոր պրակտիկա և հանրային քաղաքականություն» զեկույցով: ՀՊՄՀ սոցիալական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի ղեկան, դոցենտ Ս. Գևորգյանը արծարծեց բարձ-

րագույն կրթության որակի չափորոշիչների հիմնահարցը՝ նշելով դրանց համապատասխանեցման առաջնային պահանջները: Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի պրոֆեսոր Է. Գրինը քննարկեց հոգեբանության դասավանդման գործընթացում մասնագիտական հասկացությունների հարցերը, որոնք առնչվում են ուսման և դասավանդման համակարգի հայերեն կիրառությանը:

Երկրորդ նստաշրջանի ընթացքում ԵՊՀ հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հ. Ավանեսյանը կատարեց հոգեբանական կրթության հիմնահարցի շուրջ մոտեցումների հայեցակարգային վերլուծություն: ԱՄՆ-ի Կալիֆորնիայի նահանգի Օբլանդ քաղաքում գործող Keiser Permanente բժշկական կենտրոնի հոգեբուժական բաժանմունքի աշխատակից, հ.գ.թ. Ջ. Գիմյանը ներկայացրեց հոգեբանների կրթության և ուսուցման կալիֆորնյան մոդելի նրբությունները, ինչպես նաև անդրադարձավ դպրոցների հարմարեցման հիմնահարցին: IGEFA ֆոնդի ներկայացուցիչ, հ.գ.թ. Մ. Ֆրիմենը (ԱՄՆ, Կալիֆորնիա) անդրադարձավ Միացյալ Նահանգներում միջնակարգ և բարձրագույն կրթության ոլորտներում ինտերնետը՝ որպես կրթական ռազմավարության ուղղության տարր, ընդգրկելու յուրահատկություններին:

Գիտաժողովի երկրորդ օրվա աշխատանքները տեղի ունեցան երեք մասնաճյուղերով, որոնցից առաջինը նվիրված էր հոգեբանության դասավանդման կիրառական և բնագավառային ընդհանուր հիմնահարցերին:

Հոգեբանական կրթության հիմնահարցերի վերլուծությանը նվիրված առավել հետաքրքրական զեկուցումներից էին հետևյալները՝ Ռ. Աղուզումցյանի «Ուսանողների մոտ ինքնուրույն և քննադատական մտածողության ձևավորման մեթոդիկան», Վ. Պապոյանի, Ա.

Գալստյանի, Ե. Մուրադյանի «Բարձրագույն կրթության համակարգում գիտելիքի վերահսկման հիմնախնդիրը», Ն. Խաչատրյանի «Ինքնուրույն խմբային աշխատանքի մեթոդի արդյունավետությունը մագիստրանտների ուսումնական գործընթացում», Ս. Ամիրյանի «Հոգեբանության դասավանդումը և հումանիստական գաղափարները» և Դ. Հայրապետյանի «Հոգեբանության դասավանդման մեջ համակարգչային ծրագրերի ներմուծման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները»:

Երկրորդ մասնաճյուղում զեկուցողներից Ս. Խուրդյանն անդրադարձավ հիպոնոսի ուսուցանման հարցին՝ մասնավորապես նշելով ներշնչանքային տեխնիկաների ուսուցանման դաշտի հնարավորությունները: Գ. Պետրոսյանի զեկույցը նվիրված էր հոգեբանության պատմության առարկայի դասավանդման հիմնախնդրին, որի ընթացքում առաջարկվեցին հետաքրքիր լուծումներ: Հ. Հովհաննիսյանն իր զեկուցման մեջ, հիմնավորելով բառիմաստային վերլուծության անհրաժեշտությունը, կարևորեց դրա դերը հոգեբանական հետազոտություններում և դասավանդման մեթոդիկայում:

Երրորդ մասնաճյուղում զեկույցները թեմատիկայի առումով կարելի է խմբավորել 3 ուղղություններով. ա) հոգեբանության դասավանդման առանձնահատկությունները մասնագիտական և ոչ մասնագիտական ֆակուլտետներում (Ջ. Մալոյան, Գ. Ղազարյան, Մ. Սահակյան, Հ. Բաբայան, Ա. Գալստյան), բ) հոգեբանության դասավանդման առանձնահատկությունները դպրոցում (Ա. Շահվերդյան), գ) ստեղծագործական հոգեբանության դերը գիտությունների համակարգում (Ս. Սարգսյան):

Բաժանմունքներում աշխատանքների քննարկումներից հետո գիտաժողովը գումարեց ամփոփիչ նիստ, որի ընթացքում բաժանմունքների ղեկավար-

ները ներկայացրեցին ղեկավարած մասնաճյուղում տեղի ունեցած քննարկումների արդյունքները: Նշվեց, որ բոլոր զեկույցներում բարձրացված էին դասավանդման գործընթացի կազմակերպման առնչվող կարևոր հիմնախնդիրներ, որոնց հանգամանալից քննարկման համար առաջարկվեց կազմակերպել կլոր սեղաններ և գիտական սեմինարներ, մշակել դասախոսների պատրաստման համակարգ՝ հատուկ ուշադրություն դարձնելով դասավանդման մեթոդների և դասախոսների հոգեբանական պատրաստվածության հարցերին:

Ամփոփելով երկօրյա գիտաժողովի արդյունքները՝ մասնակիցներն իրենց գոհունակությունը հայտնեցին նման բարձր մակարդակի միջոցառում կազմակերպելու համար: Հոգեբանական կրթության և դասավանդման հիմնախնդիրների հետագա նոր ուսումնասիրությունների և կատարվելիք աշխատանքները համակարգելու համար արվեցին գործնական առաջարկներ: Մասնավորապես, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ, պրոֆ. Հ. Ավանեսյանն

առաջարկեց բոլոր կարող ուժերին համախմբել՝ ստեղծելու հայերեն հոգեբանական հանրագիտարան, որի անհրաժեշտությունը վաղուց զգում են հայ հոգեբաններն ու գիտության այլ բնագավառների մասնագետները:

Գիտաժողովը, ինչպես նշեցին ելույթ ունեցողներից շատերը, ացավ գիտական պատշաճ մակարդակով և իր նպատակը բերեց հայրենական հոգեբանական գիտության զարգացման գործին: Ցանկություն հայտնվեց նաև մասնագիտական համագործակցության, փորձի փոխանակման, ծառայած խնդիրները միացյալ ջանքերով լուծման նպատակով հաճախակի կազմակերպել նման գիտաժողովներ:

Ի դեպ, գիտաժողովի կազմակերպիչները աշխատելով նույն եռանդով, արդեն հրատարակել են գիտաժողովի նյութերի ժողովածուն (տե՛ս «Նյութեր», միջազգային գիտագործնական գիտաժողով «Հոգեբանության դասավանդման ժամանակակից հիմնախնդիրները», Եր., 2007, 199 էջ):

Հ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Ե. Գ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ЮБИЛЕЙНАЯ КОНФЕРЕНЦИЯ НА ФАКУЛЬТЕТЕ РУССКОЙ ФИЛОЛОГИИ

Одним из важных событий университетской жизни в ноябрьские дни стало достойно отмеченное не только в стенах самого университета, но и профессионально-родственными кругами научно-образовательной общности Армении, ее прессой и телевидением 30-летие факультета русской филологии — флагмана уже имеющей у нас 70-летнюю историю руси-

стики. В конце 1930-х годов на едином филологическом факультете ЕГУ открылось, наряду с другими отделениями, и отделение русского языка и литературы, созданы были кафедры русского языка и русской литературы, сложилась таким образом, а с годами ширилась, крепла, обогащалась кадрами база систематического развития русистики как науки и привлекательной